ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1952 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գ. Ստեփանյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ԵՐԿՈՒ ՏՈՂ»-ՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՄԻ ԱԶԳԱՆՎԱՆ ԱՂԱՎԱՂՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Միքայել Նալբանդյանը 1861 թվականին լույս ընծայած իր «Երկու տող» նշանավոր աշխատության սկզբում, խոսելով հայտնի ռեակցիոն գործիչ Զամուռճյանի «Երևակի» 1861 թ. հունվարի 1-ի համարի մասին,— որտեղ Նալբանդյանի դեմ Զամուռճյանի գրած հոդվածը առիթ է դարձել «Երկու տողի» հրապարակ գալուն, ասում է. «Երևակի վերոգրյալ տետրակը մեզ ուղարկողը գրում էր, թե Պոլիս ամեն տեսակ մարդերից ցուրտ ընդունելություն է գտել այդ գրվածքը. իսկ մեր վերա այդչափ ևս տպավորություն չգործեց.... պարոնի վայր ի վերո աղճատաբանությունքը ստոր են ամենայն տեսակ քննութենից և Մեղուին և պ. Այվատյանին մեր շնորհակալությունը հայտնելով չենք կարող միևնույն ժամանակ չհայտնել մեր առ ի սրտե կարեկցությունը պ. Զամուռճյանի գրվածքին պատասխանելու խորհրդով կորուսած ժամանակի վերա»[1]։

Այս տողերից պարզ երևում է, որ «Երևակի» հիշյալ համարը Պոլսից Նալբանդյանին է ուղարկել Այվատյանը։ Ո՞վ է այդ անձնավորությունը, ի՞նչ առնչություն է ունեցել Նալբանդյանի հետ, մինչև այժմ ոչ ոքի չի գրաղեցրել այդ հարցը։ Ահա թե ինչու։

«Երկու տողը» երկրորդ անգամ լույս է տեսել 1906 թ. Ռոստովում, Նալբանդյանի երկհատորյակի 2-րդ հատորում, որտեղ վերոհիշյալ նախադասության մեջ Այվատյան ազգանունը տպագրված է Այվազյան[2]։

Նալբանդյանի այդ երկը երրորդ անգամ լույս է տեսել 1939 թ. Արմֆանի հրատարակությամբ, որտեղ նույնպես տպված է Այվազյան՝ առանց բացատրելու, թե ով է այդ անձնավորությունը։ 1940 թվականին Արմֆանի հրատարակությամբ լույս տեսած Մ. Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի 3-րդ հատորում ևս Այվատյանի փոխարեն մեզ ներկայանում է Այվազյանը։ Այստեղ, արդեն, ծանոթագրություններ և կոմենտարներ կազմողները ոչ միայն օրինականացրել են սխալը,— չնայած հայտնում են, որ այդ «հրատարակությունը կատարվում է 1861 թ. փարիզյան հրատարակության հիման վրա»,— այլև փորձել են բացատրել, թե ով է Այվազյանը[3]։ Ըստ նրանց՝ Նալբանդյանի հիշատակած անձնավորությունը «արևմտահայ հասարակական գործիչ Աբրահամ Այվազյանն է»[4]։ Ինչի՞ հիման վրա են նրանք հանգել այդ եզրակացու-

---

[1] *Մ. Նալբանդյան, Երկու տող, Փարիզ, 1861, էջ 6—7։*

[2] *Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 2-րդ, Ռոստով, 1903, էջ 271։*

[3] *Այդ հատորի տեքստը տպագրության են պատրաստել ընկ. ընկ. Հար. Մկրտչյանը, Նշան Մուրադյանը և Եղիշե Հովհաննիսյանը։*

[4] *Աբր. Այվազյանի անունը նույնպես կապվում է Մ. Նալբանդյանի հետ։ Այվազյանը ևս 1860—61 թվերին հանդիպել է Նալբանդյանին, հետագայում, 1893 թ. հրատարակած իր «Շար հայ կենսագրությանց» աշխատության մեջ մի գլուխ նվիրել է Նալբանդյանին։ Այս մասին տես մեր «Մ. Նալբանդյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր» հոդվածում, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր» 1949, № 9։*

թյան, իրենց ձեռքի տակ ունեցե՞լ են որևէ կոնկրետ ապացույց։ Այդ մասին ավելորդ են համարել խոսել։ Փաստը ներկայացրել են որպես ապացուցված ճշմարտություն, մոռանալով, որ եթե նախորդ հրատարակությունների համար մի կերպ կարող էր արդարացվել վրիպակը, ապա այդպիսի գիտական հրատարակության մեջ նման սխալը և դրա քմահաճ բացատրությունը արդեն չէր կարող վերագրվել սովորական անփութության, այլ կարող էր գնահատվել որպես Նալբանդյանի տեքստի աղավաղում և փաստերի սխալ մեկնաբանություն։

Ինչ խոսք, որ գիտական այս հրատարակությունից հետո անհամեմատ ավելի հեշտ կարող էր կրկնվել վերոհիշյալ աղավաղումը։ Եվ իսկապես, 1941 թվականին ռուսերեն լեզվով լույս տեսած Մ. Նալբանդյանի միհատորյակում էլ «Երկու տողը» ծանոթագրողը՝ հենվելով անշուշտ Երկերի լիակատար ժողովածուի 3-րդ հատորի վրա, Նալբանդյանի հիշատակած անձնավորությունը համարել է Աբրահամ Այվազյանին և հենց տողատակի ծանոթության մեջ գրել է. «Աբրահամ Այվազյան—արևմտահայ ժուռնալիստ»[1]։

Սխալի այս օրինականացումը թյուրիմացության մեջ է գցել նաև Նալբանդյանի կենսագրության հետ կապված հարցերով զբաղվող բանասերներին, որոնք, չունենալով իրենց տրամադրության տակ «Երկու տողի» առաջին հրատարակությունը, և հենվելով գիտական հրատարակության վրա, Աբր. Այվազյանին համարել են Նալբանդյանի հիշատակած անձնավորությունը։ Այդպես ենք վարվել նաև մենք մեր մի հոդվածում[2]։

Միայն վերջերս, երբ առիթ ունեցանք համեմատելու «Երկու տողի» 1861 թ. հրատարակությունը գիտական հրատարակության հետ, նկատեցինք, որ Նալբանդյանի տեքստում ոչ թե Այվազյան է, այլ Այվատյան։

Այս աղավաղման երևան գալը ամենից առաջ պահանջ է խոստացադրում պարզել, թե ո՞վ է Այվատյանը, որին Մ. Նալբանդյանը շնորհակալություն է հայտնում «Երկու տողում»։

Նալբանդյանի երկերի և ոչ մի հրատարակության ծանոթագրությունների, կոմենտարների կամ բառարանների մեջ չենք հանդիպում այդ անվան հիշատակությանը։ Նալբանդյանի ծոցատետրում գրանցված անունների մեջ ևս չկա Այվատյանի անունը։ Եվ առհասարակ այժմ մոռացված մի դեմք է նա։ Ցաք ու ցրիվ տեղեկություններ միայն կան նրա մասին, որոնցից պարզվում է, որ իրոք այդ թվերին Կ. Պոլսում ապրել և գործել է Մատթեոս Այվատյանը։ Նա 1853—58 թվերին թղթակցել է լիբերալ «Մասիս» թերթին, 1860—63 թվերին հարել է Հ. Սվաճյանի «Մեղվին», հետագայում հրատարակել է «Արարատ» պարբերականը։ Այդ թերթը սուլթանիզմի դեմ բռնել է անհաշտ դիրք, գրել է մերկացնող հոդվածներ, որի հետևանքով մի քանի անգամ խափանվել է։ Եվ վերջապես Այվատյանը հրատարակել է մի քանի բրոշյուր զանազան խնդիրների մասին, այդ թվում և «Առաջնորդ հայերեն լեզվի» դասագիրքը։

Բայց այս տվյալները շատ քիչ են Այվատյանի և Մ. Նալբանդյանի կապը բացահայտելու համար։ Ուստի մենք դիմենք 60-ական թվականների մամուլին ու հրատարակություններին։

---

[1] М. Налбандян. Избранные сочинения. Редакция и предисловие Х. Саркисяна, Ереван, 1941, стр. 109.

[2] Տես մեր «Մ. Նալբանդյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր» հոդվածը, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1949, № 9։

Հ. Սվաճյանի «Մեղվի» 1860 թ. դեկտեմբերի 10-ի համարում տպագրվում է Նալբանդյանի «Հրաշափառ խայտառակություն» հոդվածը, դեկտեմբերի 20-ի համարում Նալբանդյանի հայտնի նամակը ուղղված «Մեղվի» խմբագրին։

Ռեակցիայի ճահիճը շարժվում է։ Պահպանողական մամուլը սկսում է հարձակումները Նալբանդյանի դեմ։ Պրոգրեսիվ ուժերը նույնպես նետվում են պայքարի մեջ։ «Մեղվում» լույս են տեսնում Նալբանդյանին պաշտպանություն տակ առնող հոդվածներ։ «Մեղվի» 1861 թ. փետրվարի 10-ի համարում տպագրվում է Մ. Այվատյանի «Եկեղեցվո կառավարությունը սահմանադրական է, թե միապետական» հոդվածը, որը գրված է ի պաշտպանություն Մ. Նալբանդյանի կողմից «Մեղվի» խմբագրին ուղղված վերոհիշյալ նամակի։

Այվատյանի հոդվածը շոշափում է կրոնական մի հարց։ Հեղինակը, իր պաշտպանության տակ առնելով Մ. Նալբանդյանին՝ Վանցի Պողոսին դատապարտելու հարցում, առաջ է քաշում եկեղեցական իշխանությունները ընտրովի դարձնելու, հոգևորականների գործած հանցանքների համար սահմանվող պատիժների որոշման մեջ ժողովրդին մասնակից դարձնելու խնդիրները, հարցեր, որոնց նպատակն էր վերջ տալ պատրիարքարանի ու կրոնական հաստատությունների միանձնյա ղեկավարությանն ու հակաժողովրդական արարքներին։ Եթե սրանց վրա ավելացնենք նաև այն, որ Այվատյանը առաջ էր քաշում սոցիալական հարցեր, հիշեցնում էր թե «հոգևորականի ու աշխարհականի, արուի և էգի, հրեի և հեթանոսի մեջ» խտրություն չպետք է լինի, որ սխալ է եղել, երբ «իշխանք կամ քահանայք տեր էին ու ժողովուրդը ծառա» և որ «Նալբանդյանցին ըսածին պես... մարդիկ հավասար իրավունքներով դուրս եկան աստուծու ձեռքից» և հավասար էլ պետք է լինին,— ապա պարզ կդառնա Այվատյանի հոդվածի հիմնական իդեան։

Նման տողերից երևում էր, թե Այվատյանի արծարծած գաղափարները, ո՛ր դիրքերից էին գալիս և ի՛նչ էին հետապնդում։

«Արևելյան դար» ռեակցիոն պարբերականը՝ այդ օրերին ստացված «Երկու տողի» մասին գրած իր թշնամական հոդվածի մեջ անդրադառնում է նաև Այվատյանի հոդվածին։

Պահանջելով էջմիածնի սինոդից և Պոլսի պատրիարքարանից զբաղվել «Երկու տողով» և «պետք է եղածը ի գործ դնել»— գրում է «Ահա այս բաներուն վրա խորհելու զբաղյալ ատեն՝ հանկարծ աչքերնուս կդարնե այն եկեղեցվո կառավարությունը սահմանադրական է— ըսված ու նոր ծագած վնասակար խնդիրը... Չեմք գիտեր թե ինչու համար այս ապստամբ խնդրույն

---

1 Նալբանդյանը, որ «Երկու տողում» հրապարակով շնորհակություն է հայտնել Մ. Այվատյանին, հնարավոր է, որ հատուկ նամակ էլ է գրել նրան և հայտնել իր կարծիքը ստացված նյութերի մասին։ Թե ինչու Նալբանդյանի ծոցատետրում չկա Այվատյանի անունը այն մարդկանց ցանկում, որոնց նա նամակներ է ուղարկել 1861 թ., գուցե բացատրվում է նրանով, որ Նալբանդյանը որոշ մարդկանց նամակներ է ուղարկել «Մեղվի» խմբագրության կամ հրատարակչության հասցեով։ Այսպես, 1861 թ. փետրվարի 1-ին, 5-ին և 13-ին նա նամակներ է ուղարկել Կ. Պոլիս «Մեղվի» հասցեով։ Եվ որովհետև նա «Մեղվի» խմբագիր Հ. Սվաճյանին, «մեղվականներ» Քյաթիպյանին ու Ս. Թաղվորյանին գրում էր նրանց հասցեով, ուստի անհավանական չէ, որ վերոհիշյալ երեք նամակներից դեթ մեկը հասցեագրված է եղել Մ. Այվատյանին։

վրայոք դեռ խոր լռություն մը տիրած է աղգին աստվածաբանական դասին կողմեն»[1]։

«Աստվածաբանական դասը» չէր լռել։

Կրոնական ժողովի որոշմամբ Կ. Պոլսի պատրիարք Սարգիսը հատուկ հրամանով առաջարկել էր ռեակցիոն հոսանքի պարագլուխ և «տեսաբան» Ջամուռճյան—Տերոյենցին գրել հատուկ պատասխան վերոհիշյալ հոդվածին և հերքել նրա դրույթները։ Պատրիարքի այդ նամակ-հրամանի մեջ ասված է.

«Մեծիմաստ սիրելի մեր ի Տէր։ Ի 10 փետրուար ամսոյ տարւոյս ի տասնուրեայ պարբերականն «Մեղու» հանդիսի տեսաք նամակ ինչ ուղղեալ յանուն ձեր ի հաստատել թէ սուրբ եկեղեցիս Հայաստանեայց է սահմանադրական, որ երբէք չէ ընդունելի մեզ։ Ուստի այսու գրութեամբ մերով պարտաւորեմք զձեզ պատասխանել առ նոյն նամակն, և հերքել զամենայն դայթակղական բանսն որ ի նմա, որով թէ գուցե ոմանք գայթակղեալ իցեն, ուղեսցին միտք նոցա։ Ողջ լեր ի Տէր։ Պատրիարք Կ. Պոլսոյ՝ Սարգիս արքեպիսկոպոս»[2]։

Տերոյենցը կատարում է իր տերերի առաջադրանքը և շատ արագ գրում մի գիրք «Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը»՝ բաղկացած 100 էջից, որտեղ տող առ տող քննության առնելով Այվատյանի հոդվածը, փորձում է նրան ներկայացնել որպես Նալբանդյանի «սխալ» ճանապարհի վրա կանգնած և մոլորված մի անձնավորություն, որպես մի հերետիկոս։ Խոսելով Նալբանդյանի քաղաքական հայացքների մասին, նա հարցնում է Այվատյանին. «Մենք այսպես մարդուն հերետիկոս կըսենք, քու լեզվովդ ասոր ի՞նչ կըսեք նե՝ մեզի ծանուցանելիդ շնորհ կհամարիմ» և սարսափով խորհուրդ է տալիս նրան ում ուզում է հետևի, միայն ոչ Նալբանդյանի գաղափարներին։ «Միայն թե Նալբանդյանը չըլլա քեզի աստվածաբանության դասատու ընտրածդ» գրում է նա[3]։

Տերոյենցի գրքից պարզվում է, որ Այվատյանը եղել է անդամ «մեղվականների» կազմակերպության, որին նա կոչում է «դոնամիջյան հերետիկոսների ժողովք»։

Տերոյենցի գիրքը դրվատվում է ռեակցիոն մամուլի կողմից։ Նույն «Արևելյան դարը» ողջունելով այն, հույս է հայտնում, որ «հերձուածական ձայներու տգիտաբար արձագանք եղած» Մ. Այվատյանը «Տերոյենց մեծանուն պատվելիին հանած քննության տեսրակեն համոզվելով՝ կճանչնա իր սխալը»[4]։

Տերոյենցը իր աշխատության մեջ բազմաթիվ առիթներով Այվատյանին համարում է Նալբանդյանի գաղափարների հետևորդը։ Դրանից իհարկե չպետք է ենթադրել, որ մենք գործ ունենք Նալբանդյանի ռևոլուցիոն-դեմոկրատական գաղափարների վրա կանգնած մի անձնավորության հետ։ Այվատյանը եղել է ժամանակի առաջավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչներից մեկը, որը 1860—63 թվերին արձագանքել է Նալբանդյանի ազատագրական գաղափարներին։ Դրա արտահայտություններից են 1860 թ. Այվատյանի հրատարակած երկու բրոշյուրները՝ ուղղված անգլո-ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցման դեմ Թյուրքիայում։ Այս բրոշյուրներից մեկը կոչվում է «Հայոց եկեղեցին

---

1 «Արևելյան դար», 1861, № 24։

2 Հ. Տերոյենց. Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը, Կ. Պոլիս, 1861, էջ 1։

3 Նույն տեղում, էջ 14։

4 «Արևելյան դար», 1861, № 42։

և ամերիկացի քարոզիչք», մյուսը՝ «Պատասխանի կարևոր հարցման նորին բրիտանական վեհափառության վսեմափայլ դեսպանին»։

Դժբախտաբար Այվատյանի վերոհիշյալ աշխատությունները մեր ձեռքի տակ չկան, որպեսզի մենք կարողանանք որոշակի կարծիք կազմել նրանց մասին, սակայն այն հանգամանքը, որ Այվատյանի «Հայոց եկեղեցին և ամերիկացի քարոզիչք» դիրքը ջերմորեն հանձնարարվում է ընթերցողներին՝ «Մեղվի» կողմից, պարզ է դարձնում բրոշյուրի նպատակը։

«Իննսուն երեսե բաղկացյալ տետրակ մը,—գրում է «Մեղուն»,—որու նպատակն է ամերիկացի քարոզիչներուն մեր եկեղեցվույն դեմ մինչև այժմ հանած անիրավ առարկությունները հերքելով անոր սրբությունը, անոր առաքելականությունը... ապացուցանել»[1]։

«Մեղուն» նաև մի ուշագրավ վկայություն ունի, «Այս գիրքը,— գրում է նա, —լմնցեր է 1859 հուլիսի 16-ին, տպագրել է 1860 ապրիլի 30-ին, գրքին վերջը ծանոթություն մը դրված է, «հարկը պահանջե նե հապաղման պատճառը կը հրատարակենք» ըսված է, կփափակինք, որ հրատարակվեր, եթե գիտնալու արժանի բան մըն է»[2]։

Ո՞նչն է հարկադրել հեղինակին ձգձգելու իր գրքի տպագրության գործը և այդ մասին հայտնելու հրապարակով։ Արդյոք դա կապված չէ՞ այն փաստի հետ, որ հեղինակը չի համարձակվել նաև իր անունը հիշել գրքի վրա։ Հայտնի է, որ Կ. Պոլսի օտարերկրյա դեսպանատները, օգտվելով իրենց երկրների և Թյուրքիայի միջև կնքված կապիտուլացիոն պայմանագրերով, դարձել էին ինքնիշխան մեկ-մեկ քաղաքական կենտրոն։ Նրանք ճարպկորեն կազմակերպում էին իրենց գործակալների պաշտպանությունը, հակառակորդների պատիժը։ Հնարավոր է, որ Այվատյանը զգուշացել է իր անունը հրապարակելուց, վախենալով ամերիկյան ու եզվիտ գործակալների հետապնդումներից, որոնք գործում էին Թյուրքիայում ազատ համարձակ։

Այվատյանը 60-ական թվականներին խուսափեց այդ վտանգից, սակայն 70-ական թվականներին զոհ գնաց։ Իր հրատարակած «Արարատ» պարբերականում 1876 թ. սուլթանական կարգերի դեմ գրած հոդվածների համար ռեակցիոն տարրերը վրեժ են լուծում նրանից, հարձակվելով նրա վրա այնքան են ծեծում և խոշտանգում, որ նա դրանից կարճ ժամանակ անց մեռնում է։

* * *

Տերոյենցի «Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը» աշխատությունը մի կարևոր փաստաթուղթ է, որ բացահայտում է Մ. Նալբանդյանի և ռեակցիոն հոսանքի միջև բորբոքված պայքարի մի շարք կողմերը։ Մինչև այժմ զարմանալիորեն անտեսված, Նալբանդյանով զբաղվողների ուշադրությունը չգրաված այդ գիրքը ոչ այնքան ուղղված է Մ. Այվատյանի դեմ, որքան ռևոլուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի։ Ավելին՝ ըստ էության այն ո՛չ միայն Այվատյանի վերոհիշյալ հոդվածի պատասխանն է, այլ Մ. Նալբանդյանի «Երկու տող» նշանավոր աշխատության։

Եվ այդ շատ բնական է. պոլսահայ ռեակցիայի համար հիմնական վտանգը Նալբանդյանն էր, նրա հոդվածները, ոտանավորները պարունակող «Հյուսիսափայլը»։ Այդ պարբերականը հափշտակությամբ կարդում էին դեմո-

[1] «Մեղու», 1860, № 99։
[2] Նույն անդում։

կրատական գաղափարներով տարված երիտասարդները, կարդում էր առհասարակ ամբողջ առաջավոր ինտելիգենցիան, որը ինչպես խոստովանում է Տերոյենցը, «Հյուսիսափայլ» կարդալեն ժամանակ չուներ ավետարան կարդալու»[1]։

Իսկ եթե մենք թերթենք «Մեղվի» էջերը և ծանոթանանք, թե «Հյուսիսափայլի» գրականության ո՛ր մասն էր խանդավառում այդ առաջավոր երիտասարդներին, ո՛ւմ գրածներն էին նրանք սիրով կարդում, ապա մեզ արդեն կներկայանա ո՛չ թե «Հյուսիսափայլը», որպես այդպիսին, այլ ինքը Մ. Նալբանդյանը, որի տասնյակ գործերը արտատպվում էին «Մեղվում»՝ լրջորեն անհանգստացնելով ռեակցիոն հոսանքին ու նրա ղեկավար կենտրոն պատրիարքարանին։

Տերոյենցի գրքում առաջ քաշված հարցերը երկու խմբի կարելի է բաժանել։ Մի ամբողջ շարք փաստարկումներով, սոփեստություններով նա փորձում է քննադատել «եկեղեցվո լուծը խրոխտաբար իր վրայեն» թոթափել ցանկացող Մ. Նալբանդյանին ու նրան հետևող մարդկանց, կոչելով նրանց հերետիկոսներ («մենք այսպես մարդուն հերետիկոս կըսեմք»), փորձում է արդարացնել եկեղեցականների ինքնիշխան իրավասությունը աշխարհականների վրա (իմա՝ աշխատավոր ժողովրդի վրա), համոզել թե միայն հլու-հնազանդությունը դեպի եկեղեցին ու նրա ամեն կարգի պաշտոնյաները, կարող է փրկել մարդու հոգին։

Տերյոենցի հիմնական նպատակն էր պաշտպանել սեփականատիրական կարգերի իրավունքները։ Գրքում երևում է անվեղար հոգևորականի սարսափը դեպի ներքևից եկող ամեն մի շարժում, ամեն մի պայքար։

Տերոյենցի գրքի հիմնական իդեան խտացված է հեղինակի հետևյալ տողերի մեջ։ «Պետություն մը իր կառավարության կերպը կրնա փոխել և ուրիշ կերպ մը ընտրել և ասիկա օրինավոր կըլլա, պետության գլխույն կողմեն ըլլա նե այդ փոփոխությունը։ Բայց թե որ հասարակությունը ոտք ելլե, և պետության գլխույն վրա բռնանալով իր ուզածը ընել տա նե, պարզ բառով ապստամբություն կըսվի, որն որ ետքի ժամանակիս աշխարհավարները անուշցուցած են այլ և այլ կերպ գրույցվածներով»[1]։

Հայտնի է, որ Մ. Նալբանդյանը Կ. Պոլսում մոտիկից հետաքրքրվել է մի շարք հասարակական կազմակերպություններ, միություններ աշխատանքով մասնակցել է՝ հիմնականում լիբերալ ինտելիգենցիայից բաղկացած «Բարեգործականի» աշխատանքներին, ցանկացել է նրա լեգալ հնարավորությունները օգտագործել ազատագրական պայքարի համար։ Նա շփվել է Իզմիրի Հաշտենց ընկերության ղեկավարների հետ, Կ. Պոլսի «Արևելյան թատրոնի» խմբի հետ և այլն։

Սակայն ամենից ուշագրավը նրա մասնակցությունն է միայն «մեղվականներից» և աշխատավորական խավերից բաղկացած մի ընկերության աշխատանքներին, որի անունը այնպես էլ մեզ չի հասել, և որի մասին մինչև այժմ գիտեինք միայն Տերոյենցի այլ առիթով տված մի արտահայտությունից, Տերոյենցի, որը այդ ընկերության անդամներին կոչում էր «դռնամիջյան հերետի-

---

1 «Մ. Մ. Այվազյանին Նամակին քննությունը», էջ 12։

2 Նույն տեղում, էջ 2—3։

կոսներ», այն պատճառով, որ նրանք իրենց ժողովները գումարելիս են եղել Մեծ Նոր խանի դոնամիջյան մի սենյակում։

1864 թ. մարտի 16-ին Կրոնական ժողովը զբաղվում է մի տարօրինակ հարցով, «Մասիս» թերթի խմբագիր Կ. Ութուճյանի և Տերոյենցի վեճով։ Տերոյենցը մեղադրելով Ութուճյանին, որ նա իր թերթում պաշտպանության տակ է առել հակակրոնական գրքեր, նրան անվանել էր «դոնամիջյան հերետիկոս», չնայած լիբերալ Ութուճյանը երբեք մոտ կանգնած չի եղել այդ կազմակերպությանը։ Պատրիարքը հարցրել է թե ի՛նչ է նշանակում դոնամիջյան հերետիկոս։ Տերոյենցը պատասխանել է՝ «Ժամանակով Մեծ Նոր խանին վերի դռանը մեջ սենյակ մը մեկ ընկերություն մը իրեն ժողովատեղի էր ըրել։ Ասկեց քանի մը տարի առաջ Ռուսիայեն Նալբանդյան Միքայել անունով մեկը եկավ որ հայտնի համարձակ դիվաց գոյությունը կուրանար գրով. ընկերությունը անոր հարեցավ և անոր մոլար կարծյացը պաշտպան կեցավ»[1]։

Մինչև այժմ հայտնի չէր միայն, որ նման մի ընկերություն եղել է, որի կենտրոնը եղել է Մեծ Նոր խանը և որ այդ ընկերությունը հարել է Նալբանդյանի գաղափարներին։ Բայց թե ե՞րբ է հիմնվել ընկերությունը, այն եղել է լեգալ մի կազմակերպությո՞ւն, թե գործել է անլեգալ, ի՛նչ քաղաքական ծրագիր է ունեցել, ովքե՛ր են եղել անմիջապես նրա նախաձեռնողները, հայտնի չի եղել։

Տերոյենցի «Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը» գիրքը այս հարցերից մի քանիսին պատասխանում է։

Նախ՝ պարզվում է, որ ընկերությունը հիմնվել է հենց այն օրերին, երբ առաջին անգամ Նալբանդյանը այցելել է Կ. Պոլիս։ Տերոյենցը խոսելով վերոհիշյալ ընկերության մասին, գրում է, «անիկա տակավին տարվան մըն ալ չկա»։ Եվ որովհետև Տերոյենցի գիրքը լույս է տեսել 1861 թ. ամռանը, ուստի պետք է ենթադրել, որ ընկերությունը հիմնադրվել է 1860 թ. աշնանը։ Իսկ Նալբանդյանը, հայտնի է, որ առաջին անգամ Կ. Պոլիս եկավ 1860 թ. նոյեմբեր ամսին։

Հնարավոր է ենթադրել, որ Մ. Նալբանդյանը առաջին անգամ Պոլիս այցելելիս՝ նկատի ունենալով, որ Բարեգործական ընկերությունն իր լեգալ հնարավորություններով և լիբերալ կազմով չէր կարող անմիջապես պատասխանել օրվա քաղաքական հրատապ խնդիրներին, նպատակահարմար է համարել ավելի ստուգված և իրենց սոցիալական դրությամբ դեմոկրատական պայքարին ավելի մոտ կանգնած մարդկանցից հիմնել արդեն մի անլեգալ կազմակերպություն։ Տերոյենցի մի արտահայտությունից կարելի է ենթադրել, որ ընկերությունը եղել է անլեգալ, եղել է՝ «առանց օրինավոր հեղինակության կազմված» մի ընկերություն։

Նա շատ որոշակի գաղափար է տալիս ընկերության նախաձեռնողների և ղեկավարների մասին։ Տերոյենցը Մ. Այվատյանին ուղղելով խոսքը, գրում է. «Այդ վճիռը տվող ժողովքը գիտեմ, և ես անոր դոնամիջյան ժողովակ կըսեմ, որուն նախագահն է Մեչուխեչանը և այդ ժողովքը իմ վրաս ազդեցություն չունի, դո՛ւն նայե, որ անոր վճիռեն դուրս բան չընես»[2]։

Այս վկայությունը հետաքրքրական է երկու տեսակետից. նախ՝ ցույց է

---

[1] Հ. Մրմրյան, 19-րդ դար և Տերոյենց, Կ. Պոլիս, 1908, էջ 211—212։

[2] «Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը», էջ 73։

տալիս, որ ընկերության նախագահը եղել է Մեչուխեչանը (Հ. Սվաճյանը) և հետո այն, որ ըստ երևույթին ընկերության որոշումները եղել են խիստ պարտագիր բոլոր անդամների համար, որը վկայում է և նրա կոնսպիրատիվ բնույթը։

Ամենայն հավանականությամբ Մ. Նալբանդյանի Կ. Պոլսում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում ընկերության աշխատանքները ղեկավարել է Նալբանդյանը։ Այդ մասին Տերոյենցը գրում է. «Հիշյալ ժողովակը և անոնց մեկ երկու շաբաթվան նախագահ Նալբանդյանցը...»[1], իսկ մի այլ տեղ գրում է Նալբանդյանի մասին. «իրեն ասոպի երևույթը որքան տևեց նե այդ ժողովակին գրավոր փաստաբանը եղավ»[2]։

Տերոյենցը ունի նաև տողեր, որոնք վկայում են «դռնամիջականների» գործունեության պոլսական պայմաններից բխող զգուշությունը, չափավոր հնարավորությունը, միաժամանակ Մ. Նալբանդյանի անհասելի բարձրությունը շրջապատից՝ թե՛ որպես մտածողի, թե՛ որպես պայքարող մարտիկի։ Նալբանդյանը «ասուպ մըն էր, որ հյուսիսեն փրթավ արևմուտք ինկավ»[3], ասում է Տերոյենցը և նշում՝ «Նալբանդյանցին գալով՝ ասոր ըրածը քիչ մը ձեր ժողովակեն ավելի է...»[4], իսկ մի այլ տեղ չնայած իրոնիկ ձևով, սակայն խոստովանում է իր երկյուղը Նալբանդյանի կուռ տրամաբանությունից։ Այվատյանի այն տողերին, թե Տերոյենցի դեմ գրելը թողնում է Նալբանդյանին, Տերոյենցը պատասխանում է.

«Շնորհակալ կըլլայինք, թե որ այս բաներուն վրա դուք գրեիք, որովհետև Նալբանդյանցին գրչեն շատ կվախնամք. աղեկ կտրամաբանե, բայց ծաղրաբանությամբ և կատակաբանությամբ, որոնց մեջ մասնավոր վարժություն ունենալ կերևի»[5]։

Հնարավոր է, որ Տերոյենցը չափազանցել է իր գնահատումները վերոհիշյալ կազմակերպության մասին, սակայն նրա շատ թունատ ու անզիջող տողերը վկայում են, որ իսկապես կազմակերպությունը ունեցել է որոշակի քաղաքական ծրագիր։ Ո՞րն է եղել այդ ծրագիրը։ Դրժբախտաբար մեզ ոչինչ չի հասել. սակայն Տերոյենցի մի քանի վկայությունները և կազմակերպության մեջ ընդգրկված անձնավորությունների գրական հրապարակախոսական աշխատությունները որոշ բան ասում են այդ մասին։ Ըստ երևույթին կազմակերպության հիմնական ծրագիրը եղել է հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի կազմակերպումը։ Եվ որովհետև այդ պայքարը ուղղված էր ոչ միայն սուլթանիզմի ու նրա հովանավորող եվրոպական իմպերիալիզմի դեմ, այլև սուլթանիզմի հենարան հայ էֆենդիության ու կրոնական մարմինների դեմ, ուստի ծրագիրը հետապնդում էր երկու նպատակ. ա) նախ հայ ժողովրդի ճակատագրի տնօրինումը խլել ամիրաների ու նրանց վարչական հենարան պատրիարքարանի ձեռքից, ժողովրդի կողմից ղեկավարություն պահանջել անգամ հոգևոր իշխանություններում և բ) շեշտակի պայքար ուղղել օտարերկրյա էքսպանսիայի դեմ, անգլո-ամերիկյան, ֆրանսիական գաղութարարների դեմ, որոնց գործակալները, միսիոներները

---

[1] «Մ. Մ. Այվատյանին նամակին բննությունը», էջ 18։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ էջ 17։
[4] Նույն տեղում, էջ 18։
[5] Նույն տեղում, էջ 14։

կուլտուրական-կրոնական քարոզի քողի տակ կատարում էին քաղաքական աշխատանք, ձգտում էին դավանափոխ անելով հայ ժողովրդին, ձուլել, ասիմիլացիայի ենթարկել նրան։

Մենք արդեն Տերոյենցից կատարած մի մեջբերումով ցույց տվինք, թե որքան էր նա սարսափում դասակարգային պայքարից, ներքևից եկող շարժումից։ Իր աշխատության այլ մասերում նա վկայում է, որ վերոհիշյալ ընկերության նպատակն է ոչ միայն «ազգային վարչությունը ազգին աչքեն ձգելու աշխատիլ», այլ շատ ավելին՝ «ազգին մեջ հերձիդ և երկպառակություն սերմանել»։

Մենք ստորև կտեսնենք, թե «Մեղվի» շուրջ համախմբված բոլոր մարդիկ, ինչպիսի կազմակերպված և ծրագրված պայքարի են դուրս եկել օտարերկրյա գաղութարարների դեմ, որոնք հայ ժողովրդի մեջ երկպառակություն էին սերմանում, նրան բաժանելով կաթոլիկների, բողոքականների և լուսավորչականների։

Ուրեմն Տերոյենցի խոսքը ոչ թե նման երկպառակության մասին է, այլ ներքևից եկող անհնազանդության, ավելի ճիշտ դասակարգային պայքարի, որը տվյալ էտապում արտահայտվում էր կրոնական իշխանությունների և ամիրայության դեմ մղվող պայքարում։

Հայտնի է, որ այս պայքարին շատ ակտիվորեն մասնակցել են Հ. Սվաճյանը «Մեղվում» ստորագրած իր մի շարք արժեքավոր հոդվածներով, «Մյունատիի» խմբագիր Կ.-Փանոսյանը իր պոլեմիկական մի քանի բրոշյուրներով, որոնցից մեկը «Կարևոր բարեկարգությունքը» այնքան մեծ աղմուկ է հարուցել, որ պատրիարքարանը այն բանագրել է, և պատրիարքն անձամբ պատասխան բրոշյուր է գրել նրա դեմ։ Այդպիսի աղմուկ բարձրացրել են «Մեղվականներից» Արմ. Հայկունու «Ճերմակ կամ պ. Փափազյան» (1863), «Գաղտնիք կղերականության» բրոշյուրները հայ հոգևորականության դեմ, որոնք նույնպես պատճառ են դարձել հեղինակի բանադրման ու նզովմանը որպես անաստվածի։ «Մեղվականներից» Այվատյանի «Եկեղեցվո կառավարությունը սահմանադրական է թե միապետական» հոդվածին արդեն ծանոթացանք։

Այժմ տեսնենք, թե «դոնամիջյան» կոչվող այդ կազմակերպության անդամներից յուրաքանչյուրը ի՛նչպես է արձագանքել իրենց առաջ դրված մյուս կարևոր խնդրին՝ օտարերկրյա գաղութարարների դեմ ուղղված պայքարին։ Հայտնի է, որ ընկերության նախագահ Հ. Սվաճյանը տարիներ շարունակ սիստեմատիկ պայքար է մղել ամերիկյան միսիոնարության ու կաթոլիկության, եզվիտիզմի դեմ, հրատարակելով մի շարք հոդվածներ, որոնք ողջունվում էին Մ. Նալբանդյանի կողմից (տես նրա «Նկատողությունը», Երկեր, հատ 4, էջ 304)։ «Մյունատիի» խմբագիր Կ. Փանոսյանը այդ պայքարին արձագանքել է ի թիվս շատ հոդվածների նաև «Թափառական հրեայի» թարգմանությամբ, նպատակ ունենալով բացահայտել կրոնական քողի տակ գործող եզվիտների իսկական դեմքը։ Նույնպիսի նպատակով էր, որ Մ. Նալբանդյանը Մոսկվայում թարգմանում էր «Թափառական հրեան»։ Արդեն տեսանք, որ Մ. Այվատյանը երկու աշխատություն է գրել օտարերկրյա ներթափանցման դեմ։

Արմենակ Հայկունին, որ շատ մոտ կանգնած է եղել «մեղվականներին» և ջերմ տողեր գրել Մ. Նալբանդյանի մասին, ամերիկյան ազդեցության դեմ գրել է երկու բրոշյուր— «Թուրվանտա տիկին» և «Պղատոն ի Ոսփոր»։

---

[1] «Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը», էջ 16։

Վերոհիշյալ բոլոր երկերի մեջ ամերիկացիների, ֆրանսիացիների դեմ մղված պայքարի արտահայտվելը հայոց եկեղեցու պաշտպանության ձևով, ամենևին չի փոխում գործի էությունը։ Հայտնի է, որ այնպիսի մի մատերիալիստ մտածող, ինչպիսին էր Մ. Նալբանդյանը, որի համար վաղուց անցել էին այն ժամանակները, երբ մարդիկ կարծում էին, թե «Ոդին անչափելի բարձրության մեջ դրած է փիլիսոփայության աթոռը», օտարերկրյա գաղութարարների դեմ պայքարելիս օգտագործում էր «սեփական» եկեղեցուն հավատարիմ մնալու անհրաժեշտությունը։

Ինչպես տեսնում ենք, «դոնամիջյան» կոչված կազմակերպությունը շատ որոշակի աշխատանք է կատարել ներքին և արտաքին թշնամու դեմ պայքարելու գործում։ Այս աշխատանքը, սակայն, կազմում է նրա ծրագրի մի մասը։ Ամենայն հավանականությամբ կազմակերպությունը զբաղվել է ազատագրական շարժման ավելի պրակտիկ հարցերով, ապստամբության նախապատրաստման հարցով, որից սարսափում էր Զամուռճյանը։

Նալբանդյանը Մոսկվայից արտասահման էր գալիս ո՛չ թե Բաբաջանյանի կտակը հաջողեցնելու համար, որը պարզապես մի առիթ էր Ռուսաստանից դուրս գալու, այլ գալիս էր որոշակի քաղաքական-կազմակերպական աշխատանքի ծրագրով, որին իրազեկ էր և Լոնդոնի պրոպագանդիստների խումբը։

Նալբանդյանը ապստամբության կազմակերպման, այն ռուսական ռևոլուցիոն շարժման հետ կապելու ուղղությամբ շատ ավելի շոշափելի աշխատանք կատարեց Պոլիս կատարած իր երկրորդ այցելության ժամանակ՝ 1861 թ. դեկտեմբերի 3-ից, իր հետ ունենալով նաև մի ռուս ռևոլուցիոն գործիչ, որը Պոլսում Նալբանդյանի իջևանած հյուրանոցում արձանագրվել է որպես Նալբանդյանի եղբայրը և 14 օր մնալուց հետո անհայտ ուղղությամբ մեկնել է[1]։

Միքայել Նալբանդյանի կողմից գլխավորված այս ռևոլուցիոն աշխատանքի մասին իմացե՞լ են Զամուռճյանը և համախոհները։ Ամենայն հավանականությամբ իմացել են, չնայած Նալբանդյանը իր երկրորդ այցի ժամանակ շատ ավելի զգուշությամբ է գործել։ Ռեակցիան ո՛չ միայն իմացել է, այլև, սուլթանական կառավարության միջոցով անցել է հետապնդման։ Այդ է ապացուցում Ս. Թագվորյանի հայտնի նամակը Նալբանդյանին 1862 թ. մայիսին, որտեղ նա բողոքելով, որ իրենք մենակ են մնացել, գրում է. «որոնց վրա քանի մը ամիս առաջ վստահություն ունեինք, այժմ չունինք»,— և այդ այն օրերին, երբ Նալբանդյանը Թագվորյանին ուղարկում էր ծածկագրերի բանալին, սպասում էր նրա շատ որոշակի պատասխաններին, երբ ապստամբության համար անհրաժեշտ էր համարվում օգտագործել Տրապիզոնի նավահանգիստը, որտեղից միայն հնարավոր էր հայ ժողովրդի արևմտահայ հատվածին զենք հասցնել։

Ամենայն հավանականությամբ 1862 թ. գարնանը որոշ թուլամորթներ, վախենալով սուլթանական կառավարության ռեպրեսիաներից, սկսել էին իրենց հեռու պահել Նալբանդյանի հիմնադրած ընկերությունից։

Նալբանդյանի ձերբակալության լուրը էլ ավելի մեծ դժվարության առաջ կանգնեցրեց Սվաճյանին ու նրա ընկերներին։

«Մեղվի» շուրջ համախմբված մարդկանց ճնշող մեծամասնությունը, սա-

[1] Տես մեր «Մ. Նալբանդյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր» հոդվածը, «Տեղեկագիր», 1949, № 9։

կայն մինչև վերջն էլ հավատարիմ մնաց Նալբանդյանի գլխավորած ազատագրական պայքարին։ Այդ երևում է անգամ Նաբանդյանի բանտարկության օրերին «Մեղվի» և այլ պարբերականների էջերում Նալբանդյանի մասին գրված ջերմ տողերից, երևում է հատկապես 1867 թվին Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձի այնքան հանդիսավոր նշումից թատերական ներկայացման քողի տակ, ներկայացում, որը կրկնվեց 3 անգամ, վերածվեց հզոր ցույցի, որի ընթացքում արտասանվեցին ճառեր Նալբանդյանի մասին, երգվեց Նալբանդյանի «Ազատություն» երգը և ձեռքից ձեռք անցավ մեծ ռևոլուցիոն-դեմոկրատի մեծացրած նկարը[1]։

Այսպիսով, Մ. Նալբանդյանի «Երկու տող» աշխատության մեջ հիշատակված Այվատյան ազգանվան աղավաղման ճշտման հետքերով հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. «Երկու տողում» Մ. Նալբանդյանի հիշատակած անձնավորությունը ոչ թե հասարակական գործիչ Աբր. Այվազյանն է, ինչպես սխալմամբ կարծել են «Երկու տողի» բոլոր հրատարակիչները՝ 1906 թվից մինչև մեր օրերը, այլ հրապարակախոս Մաթեոս Այվատյանը։

2. Մ. Այվատյանի ասպարեզ գալով՝ Նալբանդյանի համախոհների թիվը ավելանում է մի ուշագրավ անձնավորությամբ, որը եղել է 60-ական թվականներին Նալբանդյանի գլխավորած գաղտնի կազմակերպության մեջ և արձագանքել է այդ կազմակերպության առաջ դրված հիմնական խնդիրներին։ Այվատյանը պայքարել է օտարերկրյա ներթափանցման դեմ, 1860 թ. հրատարակելով երկու գրքույկ։ Դրանցից մեկի մեջ նա մերկացրել է ամերիկյան միսիոնարների կատարած քայքայիչ աշխատանքը հայ իրականության մեջ, մյուսով հանդես է եկել հայ ժողովրդի ներքին գործերին անգլիական կառավարության միջամտության դեմ։ 1861—1863 թթ. նա աշխատակցել է «Մեղվին» և նրա էջերում պայքարել հոգևորականության դեմ՝ Նալբանդյանի դիրքերից։ Այվատյանի հոդվածից գազազած ռեակցիան Տերոյենցի միջոցով հարկադրված է եղել «Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը» գրքով հանդես գալ Այվատյանի դեմ, փորձելով պատասխանել նաև Նալբանդյանի «Մեղվում» տպված հոդվածին ու «Երկու տող»-ին։

3. Տերոյենցի «Մ. Մ. Այվատյանին նամակին քննությունը» գրքույկը, որը մինչև այժմ չի գրավել Մ. Նալբանդյանով զբաղվողների ուշադրությունը, անհամեմատ ավելի ընդարձակում է մեր գիտելիքները Նալբանդյանի ռևոլուցիոն գործունեության մասին, քան մինչև այժմ հայտնի էր։ Նախ՝ հասկանալի է դառնում այն սարսափը, որ ռեակցիոն հոսանքը ուներ Նալբանդյանի դաղափարների տարածումից։ Պարզվում է, որ Պոլսում Նալբանդյանի գաղափարներով տարված են եղել մեծ թվով մարդիկ, որոնք «Հյուսիսափայլ»-ում Նալբանդյանի երկերը կարդալուց «ավետարան կարդալու ժամանակ չեն գտել», ինչպես վկայում է Տերոյենցը։

4. Տերոյենցի գիրքը հետաքրքրական նորություններ է հաղորդում Կ. Պոլսում Մ. Նալբանդյանի ստեղծած գաղտնի կազմակերպության մասին։ Ոչ միայն ճշտվում է Նալբանդյանով զբաղվողների կողմից հայտնված այն ենթադրությունը, որ Պոլսում եղել է գաղտնի կազմակերպություն, այլ պարզվում է, որ այդ կազմակերպությունը՝

[1] Տես մեր «Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձին նվիրված մի ուշագրավ ներկայացում» հոդվածը։ «Տեղեկագիր», 1951 թ. № 11։

ա) ստեղծվել է 1860 թ. աշնանը, հենց այն օրերին, երբ Նալբանդյանն եղել է Կ. Պոլսում, նշանակում է հենց Նալբանդյանն է հիմնել.

բ) մի քանի շաբաթ կազմակերպության նախագահն ու ղեկավարը եղել է Նալբանդյանը՝ Պոլսում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում.

գ) այնուհետև կազմակերպության աշխատանքները ղեկավարել է Հ. Սվաճյանը, նամակով պարբերաբար դիրեկտիվներ ստանալով Մ. Նալբանդյանից։ Պատվիրված այդ նամակներից մեկի անդորրագիրը այժմ էլ պահվում է Նալբանդյանի արխիվում։

5. Ամենայն հավանականությամբ Նալբանդյանը կազմակերպության առաջ խնդիր է դրել լեգալ հնարավորություններով պայքարել հայ ռեակցիոն հոսանքների և օտարերկրյա գաղութարարների դեմ, իսկ անլեգալ կերպով կազմակերպել զինված ապստամբություն։ Այդ երևում է Նալբանդյանի կողմնակիցների դեմ Տերոյենցի գրած վերոհիշյալ գրքույկի այն տողերից, որտեղ սարսափով խոսվում է ներքևից եկող շարժումների, ապստամբությունների մասին և դատապարտվում են դրանք որպես աստծուն ոչ հաճելի արարքներ։ Այս առումով Թագվորյանի հայտնի նամակը և Նալբանդյանի ծոցատետրում հայտնաբերված ծածկագրերը այժմ ավելի են իմաստավորվում և հարկադրում Նալբանդյանով զբաղվողներին՝ ավելի լրջորեն հետաքրքրվելու այս հարցով։